ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, գ. Արջուտ, 4-րդ փ., շենք 26, Հեռ. 093 19 91 34, arjut.lori@mta.gov.am

N ԳԱ97
23 մայիս 2019թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Արջուտ համայնքի ղեկավարի թիվ 20-25 որոշումները:

23.05.2019
X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

Կապ. '

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

07.05.2019թ. թիվ 20-Ա

ՈՐՈՇՈՒՄ

06-019-004-004 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սեյրան Երեմի Հարությունյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2393-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ, 66-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության 29.12.2005թվականի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Որոշում եմ՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2393-Ն որոշմամբ Արջուտ համայնքում գտնվող և Սեյրան Երեմի Հարությունյանին վարձակալության իրավունքով տրամադրված 0.09հա հողամասը ընդգրկված է սեփականության իրավունքով համայնքին փոխանցված ցանկով բնակավայրերի նշանակության հողամասերի ցանկում, որոնք մասնավորեցման ենթակա հողամասեր են, ուստի, առաջնորդվելով վերոնշյալ օրենքներով, բնակավայրերի նպատակային նշանակության 0.09 հա հողամասը 199800 /հարյուր իննսունինը հազար ութ հարյուր/ ՀՀ դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Սեյրան Երեմի Հարությունյանին :
2.Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:
3.Սեյրան Երեմի Հարությունյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
4.Սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:
5.Անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 37 փողոց, թիվ 6 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

10.05.2019թ. թիվ 21-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում եմ՝

Համայնքի 2019 թվականի բյուջեի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4237 հոդվածով նախատեսված միջոցներից 100000 դրամ 2-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ և 5122 հոդվածով նախատեսված միջոցներից 100000 դրամ 3-րդ եռամսյակից տեղափոխել 2-րդ եռամսյակ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14.05.2019թ. թիվ 22-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի 06-019-070-023 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 4-րդ փողոց, թիվ 7 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

14.05.2019թ. թիվ 23-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումը՝

Որոշում եմ՝

ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի 06-019-038-008 ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքին տրամադրել Արջուտ համայնք, 19 փողոց, թիվ 18 փոստային հասցե:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

15.05.2019թ. թիվ 24-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի՝

Որոշում եմ՝

Համայնքի 2019 թվականի բյուջեի բաժին 01, խումբ 1, դաս 1, 4264 հոդվածով նախատեսված միջոցներից 45000 դրամ 4-րդ եռամսյակից տեղափոխել 2-րդ եռամսյակ և 4261 հոդվածով նախատեսված միջոցներից 45000 դրամ 2-րդ եռամսյակից տեղափոխել 4-րդ եռամսյակ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս.ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

21.05.2019թ. թիվ 25-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածին, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 01-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Որոշում եմ՝

Բավարարել համայնքի հետևյալ բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝

1. Հայրապետյան Սեմյոն – 6000դրամ, սոց. օգնություն
2. Խոյեցյան Արման – 20 000 դրամ, սոց. օգնություն
3. Շահջանյան Լիլիթ – 20 000 դրամ, սոց. օգնություն
4. Մելիքսեթյան Մարիամ – 15 000 դրամ, սոց. օգնություն
5. Աբրահամյան Արսինե – 15 000 դրամ սոց. օգնություն

Ընդամենը –76 000 դրամ:

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺՊ՝ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ